Արեւիկ Բ. Մելիքեան

Պատմութիւնը այն ամէնի ոչ ամբողջական ու խնդրահարոյց վերակերտումն է, ինչն այլեւս չկայ: Հիշողութիւնը միշտ արդիական ֆենոմէն է՝ յաւերժական ներկայի հետ վերապրուող կապ[1]:

Պիեռ Նորա

1918 Թ. ՄԱՅԻՍԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանի հաւաքածուներում*

Բանալի բառեր – Մայիսյան հերոսամարտեր, Սարդարապատի հուշահամալիր, պատմական անցյալ, հիշողություն, զենքեր, կենցաղային առարկաներ, Արամ Մանուկյան:

Ժամանակի ընթացքում մոռացութեան են մատնւում պատմական շատ իրադարձութիւններ եւ դէպքեր: Դրանք մոռացութիւնից փրկելու համար կանգնեցւում են յուշարձաններ եւ յուշաղբիւրներ, կառուցւում յուշահամալիրներ: Հիշողութիւնը փաստացի երեւոյթ է, որը պահպանում է յաւերժական կապը ներկայի եւ անցեալի միջեւ:

1918 թ. Մայիսեան հերոսամարտերում հայ ժողովրդի պայքարի պատմութեան վերագնահատումը եղաւ բաւականին ուշ՝ 50 տարի անց, երբ շատ դէպքեր մոռացութեան էին մատնուել, եւ մասնակիցներից շատերն այլեւս ողջ չէին: Պէտք էր մոռացութիւնից փրկել այդ հերոսական իրադարձութիւնները: Ի վերջոյ յաղթանակները յաւերժացուեցին. կառուցուե-

* Յօդուածն ընդունուել է տպագրութեան 12.11.2021:

1 **Нора Пьер**, Проблематика мест памяти. Франция-память / **П. Нора, М. Озуф, Ж. де Пюимеж, М. Винок**. - СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 1999, с. 20.

ցին Սարդարապատի (50-ամեակ) եւ Բաշ-Ապարանի (61-ամեակ)[2] յուշահամալիրները: Սարդարապատի յուշահամալիրը կառուցուել է ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեանի, քանդակագործներ Արա Յարութիւնեանի, Սամուէլ Մանասեանի եւ Արշամ Շահինեանի կողմից (բացումը եղել է 1968 թ. մայիսի 25-ին): Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրին մաս կազմող Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանը բացուել է 1978 թ.՝ յուշահամալիրի բացումից տասը տարի անց: Թանգարանում պահպանուող աւելի քան 74 հազար թանգարանային առարկաների թւում են նաեւ 1918 թ. Մայիսեան հերոսամարտերի մասնակիցների անձնական իրերը: Դրանց մեծ մասը զէնքեր եւ կենցաղային առարկաներ են, որոնք թանգարանին են նուիրել մասնակիցների ժառանգները: Դրանք ցուցադրուած են «Մայիսեան հերոսամարտերը եւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը» բաժնում: Դա պատմական յիշողութիւնը վերականգնելու, անցեալը մոռացութիւնից փրկելու կարեւոր գործընթաց է:

Յօդուածի նպատակն է լուսաբանել եւ հանրահռչակել ժամանակի հայ բարձրաստիճան հրամանատարների եւ աշխարհազօրայինների անձնական՝ արդէն մասունք դարձած իրերը:

Յայտնի պատմական դէմքերի ու հերոսների իրերը հաւաքելն ու դիտարժան դարձնելը մենք ինքնանպատակ չենք համարում: Չէ՞ որ դրանք նրանց ապրած ժամանակաշրջանի ու կեանքի խօսուն վկաներն են եւ կրում են նրանց կենսաէներգիան: Նրանք այն անձինք են, որոնք իրենց գործունէութեամբ առաջ են մղել հասարակական կեանքն ու տուել բազում խնդիրների լուծման բանալին: Առաջին հայեացքից սովորական թուացող գրիչն ու ծխամորճը վերաիմաստաւորւում եւ արժեւորւում են միայն այն պատճառով, որ պատկանել են լեգենդար հերոսների: Դրանք կարող են վերակենդանացնել անցեալում ննջած պատմական յիշողութիւնը, որն ազգի ինքնագնահատականի, սեփական անցեալի գիտակցման կարեւորագոյն գործօններից է: **Պատմական անցեալը մոռացութեան տալը ազգային ինքնութեան կործանում է: Անցեալն է սնուցում ներկան իր գիտական, մշակութային բացայայտումներով ու ձեռքբերումներով:** Առանց անցեալի՝ ներկան դիմազուրկ է:

2 Յուշահամալիրը կառուցուել է ի յիշատակ Մեծ եղեռնի, Բաշ-Ապարանի հերոսամարտի եւ Երկրորդ աշխարհամարտի զոհերի:

Արամ Մանուկեան

Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրներից **Արամ Մանուկեանը**[3] 1918 թ. Մայիսեան հերոսամարտերի օրերին ծաւալել է կազմակերպչական լայն գործունէութիւն: Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին հնչել են կարծես մեր օրերի համար ասուած նրա խօսքերը. «....Հայերով ոչ ոք չի հետաքրքրուում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մէնակ ենք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[4]:

1917 թ. վերջերին Արեւելահայոց ազգային խորհուրդը կազմակերպչական մեծ փորձ ունեցող Արամ Մանուկեանին ուղարկում է Երեւան իբրեւ լիազօր ներկայացուցիչ: Ստանձնելով հայրենիքի պաշտպանութեան գործը եւ ստանալով դիկտատորի լայն լիազօրութիւններ՝ նա իր ձեռքում է կենտրոնացնում Արեւելեան Հայաստանի ռազմական եւ վարչական իշխանութիւնը: Այս մեծ հայրենասէրի, անմնացորդ նուիրեալի անձնական իրերը պահպանւում եւ ցուցադրւում են թանգարանում: 1998 թ. յունիսի 24-ին թանգարան է այցելել Արամ Մանուկեանի 80-ամեայ դուստրը՝ Սեդա Մանուկեանը, հօր անձնական իրերը թանգարանին նուիրելու առաքելութեամբ: Իրեր, որոնք նա տարիներ շարունակ մասունքի պէս խնամքով պահել-պահպանել էր: Երիզանախշ, քանդակազարդ, սիրամարգի տեսքով ձեւաւոր բռնակով եւ դուրս ճկուած նստուկով արծաթէ բաժակակալը (ՀԱՊԹ 8196/1, «ԹՄ» 835) Արամ Մանուկեանը նուէր էր ստացել 1916 թ. նոյեմբերի 5-ին, ունի «Քաւոր աղին $19\frac{5}{x}16$» գրութիւնը: Արամ Մանուկեանի արծաթէ թեզանիքակալները (ՀԱՊԹ 8196/3 ա, բ, «ԹՄ» 835) շատ ինքնատիպ են՝ կլոր վերնամասով, զարդանախշ: Թեզանիքակալների միւս մասն ունի զոյգ թռչունների պատկերով «Ա» տառի ձեւ: Երկու մասերը միմեանց միացած են շղթայով:

Հաւաքածուի մաս է կազմում Արամ Մանուկեանի գրպանի ժամացոյցը (ՀԱՊԹ 8196/2, «ԹՄ» 835/2): Կլոր, ժամերի ու վայրկեանների համար նախատեսուած մեծ ու փոքր դաշտերով, ոսկեգոյն հատիկաշարով երիզուած, լատինատառ գրութեամբ (K. Serkisoff, Constantinople) ժամացոյցի բաց-

3 **Արամ Յարութիւնի Մանուկեան (1879-1919)** – Երեւանի Ազգային խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետութեան ներքին գործերի նախարար (1918):
4 «Հայրենիք», Պոսթըն, 1964, ապրիլ, N 4, էջ 70:

ուող կափարիչն ունի բուսական զարդանախշեր եւ «Remonto in Mncre 18 Rubis» գրությունը[5] (յաւելուած II, նկ. 1):

Թանգարանի իւրաքանչիւր այցելու մեծ հետաքրքրութեամբ է զննում այս առարկաները եւ կարծես դրանց միջոցով հաղորդակցւում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի հետ:

Կարեւորելով Ա. Մանուկեանի հայրենանուէր գործունէութիւնը հայ ժողովրդի փրկութեան եւ ՀՀ ստեղծման գործում՝ 2019 թ. թանգարանի կենտրոնական ցուցասրահում բացուեց Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր Ա. Մանուկեանի ծննդեան 140-ամեակին նուիրուած ցուցադրութիւնը, իսկ մայիսի 28-ին Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրում կանգնեցուեց նրա 140-ամեակին նուիրուած յուշակոթող:

Արամ Մանուկեանի 140-ամեակին նուիրուած յուշակոթող

6 մետր բարձրութեամբ, կարմիր տուֆից կերտուած յուշակոթողը կառուցուել է Տորոնտոյում Հայաստանի պատուոյ հիւպատոս Վան Լապոյեանի հովանաւորութեամբ: Հեղինակներն են ճարտարապետ Հայկ Ասատրեանը եւ քանդակագործ Արտակ Համբարձումեանը: Սա ոչ միայն Ա. Մանուկեանի անձի եւ գործունէութեան յաւերժացումն է, այլեւ պատմական յիշողութիւնը վառ պահելու փորձ:

Դաժան ճակատագրի են արժանացել 1918 թ. Մայիսեան հերոսամարտերի մասնակիցները: 1920-1921 թթ. 1400 հայ սպաների հետ նրանցից շատերը աքսորուել են Հայաստանից, զոհ դարձել ստալինեան բռնատիրութեանը, գնդակահարուել՝ չունենալով գերեզման: Հալածանքի ենթարկուածների թւում էին 1918 թ. Մայիսեան հերոսամարտերի բարձրագոյն սպայակազմի

5 «Serkisof Demiryolu» յայտնի բրենդային գրպանի ժամացոյցների ֆաբրիկան հիմնել է պոլսահայ ոսկերիչ Սարկիսովը 1880 թ.: Կարճ ժամանակամիջոցում ընկերութեան յաճախորդներ են դարձել Օսմանեան կայսրութեան եւ բանակի բարձրաստիճան պաշտօնեաները: Սակայն դա չփրկեց Սարկիսովների ընտանիքին, որը սպանուեց թուրքերի կողմից, իսկ բրենդն արդէն Աթաթուրքի օրօք անցաւ թուրք արտադրողի ձեռքը (տե՛ս /http://barev.today/news/demiryolu/, 30 января, 2016):

անդամներ Թովմաս Նազարբէկեանը, Մովսէս Սիլիկեանը, Քրիստափոր Արարատեանը, Դանիէլ Բէկ-Փիրումեանը եւ այլք:

Թովմաս Նազարբէկեան

Հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ-մայոր **Թովմաս Նազարբէկեանը**[6] 1920 թ. դեկտեմբերին աքսորուել է Ռեազան: 1921 թ. ապրիլի 2-ին ազատ է արձակուել եւ բնակութիւն հաստատել Թիֆլիսում, որտեղ էլ վախճանուել է 1931 թ. փետրուարի 17-ին՝ մոռացուած բոլորի կողմից ու աղքատութեան մէջ: Նա գրել է յուշեր 1914-1918 թթ. Կովկասեան ռազմաճակատի գործողութիւնների մասին, որոնք պահւում են Հայաստանի ազգային արխիւում: Նիւթի արխիւացումը նոյնպէս պատմական յիշողութեան պահպանման միջոց է:

Մովսէս Սիլիկեան

Հայաստանի ազգային արխիւում են պահւում նաեւ **Մովսէս Սիլիկեանի**[7] եւ **Քրիստափոր Արարատեանի**[8] դատավարութեանը վերաբերող գործերը: Դրանցից տեղեկանում ենք, որ Մ. Սիլիկեանը 1920 թ. դեկտեմբերից մինչեւ 1935 թ. տարաբնոյթ մեղադրանքներով քանիցս ձերբակալուել է, աքսորուել նախ Ռեազան, ապա՝ Ռոստով: 1937 թ. օգոստոսի 8-ին ենթարկուել է խուզարկութեան եւ ձերբակալուել: 1937 թ. սեպտեմբերի 22-ին հարցաքննութեան ժամանակ իրեն մեղաւոր չի ճանաչել: 1937 թ. նոյեմբերի 16-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ[9] եռեակի որոշմամբ՝ թիւ 19171 գործով դատապարտուել է գնդակահարութեան՝ անձնական գոյքի բռնագրաւ-

6 **Թովմաս Յովհաննէսի Նազարբէկեան (1855-1928)** – ռազմական գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր (1916), Հայկական բանակային կորպուսի հրամանատար (1917), Հայաստանի Հանրապետութեան գեներալ-լէյտենանտ (1919):

7 **Մովսէս Բաբայի Սիլիկեան (1862-1937)** – հայկական 2-րդ հրաձգային դիւիզիայի եւ Երեւանի նահանգի երեւանեան զօրախմբի հրամանատար, ռուսական բանակի գեներալ-մայոր (1917), Հայաստանի Հանրապետութեան բանակի գեներալ-լէյտենանտ (1919):

8 **Քրիստափոր Գերասիմի Արարատեան (1876-1937)** – Սարդարապատի ճակատամարտում Հայկական կորպուսի հրետանային բրիգադի հրամանատար, Հայաստանի Հանրապետութեան բանակի գեներալ-մայոր (1919):

9 Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Ներքին գործերի ժողովրդական (կոմիսարիատ), տե՛ս **Մարգարեան Ա.**, Հայոց լեզուի յապաւումների բառարան, Եր., 1979, էջ 87, 96:

մամբ: Բռնագրաւուած իրերի թւում էին անձնագիրը, տարաբնոյթ նամակներ, ընկերների լուսանկարները, ձեռքի Աստուածաշունչը եւ գրպանի օրացոյցը[10]:

Քրիստափոր Արարատեան

ՀՀ ռազմական նախարար **Քրիստափոր Արարատեանը** 1937 թ. սեպտեմբերի 2-ին ձերբակալուել է, իսկ 1937 թ. դեկտեմբերի 10-ին՝ գնդակահարուել: «Փակագիծ» օրաթերթում տպագրուած Համլետ Կոնջորեանի «Հրետանաւորը» յօդուածը պատմում է Քրիստափոր Արարատեանի մասին: Յօդուածում նշւում է, որ ձերբակալութեան ժամանակ բռնագրաւուել են Երեւանում՝ Սւերդլովի փողոցում գտնուող նրա երկյարկանի տունը, ողջ ունեցուածքը, պարգեւները, անուանական զէնքերն ու ձեռագրերը[11]: 2008 թ. մայիսի 7-ին Սարդարապատի հերոսամարտի 90-ամեակի կապակցութեամբ թանգարան էր այցելել Քրիստափոր Արարատեանի թոռը՝ Եուրի Արարատեանը, որը թանգարանին նուիրեց Քրիստափոր Արարատեանի՝ բռնագրաւումից փրկուած օրագիրը եւ մի քանի լուսանկարներ (յաւելուած II, նկ. 2):

Դանիէլ Բէկ-Փիրումեան

1918 թ. մայիսեան օրերին **Դանիէլ Բէկ-Փիրումեանը**[12] ղեկավարել է ռազմական գործողութիւնները Սարդարապատի շրջանում: Նրա անմիջական ջանքերով հնարաւոր է եղել կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը եւ արժանի հակահարուած տալ թուրք զաւթիչներին: Ալեքսանդր Շնէուրի վկայութեամբ՝ զօրավար Դանիէլ Բէկ-Փիրումեանն այդ վճռական պահին յարմար եւ արժանի անվեհեր զինուորական վարիչն էր[13]: Սարդարապատի ճակատամարտում են կռուել նրա երկու որդիները՝ Յովսէփը (1888-1942) եւ Միքայէլը (1889-1952)[14]:

---

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 137, «Дело 19171»:
11 Տե՛ս «Փակագիծ», Եր., 15-ը մայիսի 2008:
12 **Դանիէլ Աբիսողոմի Բէկ-Փիրումեան (1861-1921)** – Սարդարապատի ճակատամարտում Սարդարապատի զօրաջոկատի ընդհանուր հրամանատար, ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ (1915), Հայաստանի Հանրապետութեան գեներալ-լէյտենանտ (1919):
13 Տե՛ս «Մարտիկ», Արցախ, 2010:
14 Տե՛ս **Пирумян Ю.**, На обрывках лет и дней: жизнь Даниэл-бек Пирумяна, М., 2013, էջ 168, 181:

Պօղոս Բէկ-Փիրումեան

Դանիէլ Բէկ-Փիրումեանի հօրեղբօրորդի, Սարդարապատի ճակատամարտում աչքի ընկած **Պօղոս Բէկ-Փիրումեանի**[15] ղեկավարած 5-րդ՝ «Մահապարտների» գնդի[16] մարտիկների ցուցաբերած խիզախութիւնն աննկարագրելի է:

Վարդան Ջաղինեան

Անդրադառնանք նոյն գնդի 1-ին գումարտակի հրամանատար **Վարդան Ջաղինեանին**[17]: Երիտասարդ շտաբս-կապիտանը Սարդարապատի հերոսամարտում աչքի է ընկել իր կրակոտ հայրենասիրութեամբ եւ կռուելու, յաղթելու անհուն ցանկութեամբ: Սարդարապատի ճակատամարտի ժամանակ՝ մայիսի 25-ին՝ 440-րդ բարձունքի ուղղութեամբ գրոհի ժամանակ, նա զէնքը ձեռքին նետուել է թշնամուն ընդառաջ եւ հերոսաբար զոհուել անհաւասար մարտում: Նրա անձնական հեռադիտակը (ՀԱՊԹ 2861, «ԱԿ-1» 349) եւ զինուորական պայուսակը (ՀԱՊԹ 6021, «Գ» 2779), որոնք Սարդարապատի ճակատամարտի ժամանակ իր մօտ էին, ցուցադրւում են Սարդարապատի հերոսամարտի պատմութեանը նուիրուած ցուցասրա-

15 **Պօղոս (Պաւէլ) Բէկ-Ղահրամանի Փիրումեան (1862-1921)** – Սարդարապատի ճակատամարտում 5-րդ՝ ղարաբաղեան («Մահապարտներ») գնդի հրամանատար, ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ (1914):

16 Հայկական 5-րդ հրածգային գունդն իր գոյութեան ընթացքում բարեխղճօրէն կատարել է իր ծառայութիւնը... Թոյլ չի տուել կարգապահութեան եւ ծառայութեան պարտքի եւ ոչ մի խախտում: Գումարտակից գնդի վերածուելուց յետոյ 1917 թ. գարնանը, երբ Կերենսկին յայտարարել է, որ զօրամասերը, ըստ ցանկութեան, կարող են գրանցուել որպէս «Մահապարտների» զօրամասեր, ողջ գունդը «Մահապարտների» (հարուածային) գունդ դառնալու իր համաձայնութիւնն է տուել: Սարդարապատի վերջին մարտերի ժամանակ գունդն իրեն պահել է, ինչպէս վայել է գերազանց զօրամասին: Երեւանի եւ նրա շրջակայքի բնակիչները յարգում եւ սիրում էին գնդի ողջ անձնակազմին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 19, «Հայաստանի Հանրապետութիւն», Եր., 25 մայիսի 1991, **Նազարեան Ա.**, Հայկական զօրամասերի կազմաւորումը Կովկասեան ճակատում /1914-1918 թուականներ/, Եր., 1999, էջ 106):

17 **Վարդան Ջաղինեան (1899-1918)** – ծնուել է Ստեփանաւանում: 1914 թ. աւարտել է Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան: Նոյն թուականին ընդունուել է Թիֆլիսի եւնկերական զինուորական դպրոց: 1917 թ. փոխադրուել է հայկական 5-րդ հրածգային գունդ: Մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին եւ յաղթանակից երկու օր առաջ հերոսի մահով զոհուել:

հում: Պահպանուել է Ջաղինեանի սգոյ պսակի ժապաւէնը (ՀԱՊԹ 2864, «Գ» 1254)՝ «Հերոս հրամանատար Վարդանին 5-րդ հայկական գնդի 1-ին գումարտակից» գրութեամբ (յաւելուած II, նկ. 3): Դրանք 1980 թ. թանգարանին է նուիրել հերոսի եղբայրը՝ Գրիշա Ջաղինեանը:

Երուանդ Մամաջանեան

Սարդարապատի ճակատամարտի օրերին թուրքական զօրքերը Սուրմալուն գրաւելուց յետոյ նպատակ ունէին Կարակալայի ու Մարգարայի կամուրջներով դուրս գալու երեւանեան զօրախմբի թիկունքը: Սակայն թուրքերի այդ նպատակը ձախողուեց: Իգդիրի ջոկատը պայթեցրեց Կարակալայի եւ Մարգարայի կամուրջները, ինչի հետեւանքով Սուրմալուն գրաւած թուրքական զօրքերը կտրուեցին Սարդարապատի ռազմաբեմից: Մարգարայի կամրջապահ տեղամասում մարտնչող գումարտակի հրամանատարն էր **Երուանդ Մամաջանեանը**: Նա ծնունդով Թիֆլիսից էր: 1914 թ. անցել է զինուորական ծառայութեան: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, յետագայում՝ Հայրենական մեծ պատերազմին: Մահացել է Երեւանում 1961 թ.: Մամաջանեանի թոռը՝ Երուանդ Մամաջանեանը, շարունակում է պապի զինուորական գործը: Երուանդ Մամաջանեանի անձնական իրերից ցուցադրւում են մետաղական ուղղանկիւնաձեւ ճարմանդով շագանակագոյն գօտին (ՀԱՊԹ 8306, «Գ» 3911) եւ ձեռքի ժամացոյցները (ՀԱՊԹ 8307/1, «ԹՄ» 850/1, ՀԱՊԹ 8307/2, «ԹՄ» 850/2)՝ «Borel, Neuchâtel» եւ «Olma» գրութիւններով: Ժամացոյցներից մէկը[18] նա նուէր էր ստացել 1918 թ. Բաշ-Ապարանի ճակատամարտի հրամանատար **Դրաստամատ Կանայեանից**: Գօտին կրել է Սարդարապատի ճակատամարտի ժամանակ: Թանգարանում պահպանուող լուսանկարում նա այդ գօտիով է: 2008 թ. Երուանդը պապից ժառանգած թանկագին մասունքը՝ գօտին, երկար ժամանակ կրելուց յետոյ նուիրել է թանգարանին: Այս ցուցանմուշը համալրում է Երուանդ Մամաջանեանի անձնական իրերի շարքը (յաւելուած II, նկ. 4):

18 Թէ որ ժամացոյցն էր նուէր ստացել Դրոյից, մեզ չյաջողուեց պարզել: Որդին՝ Սաշա Մամաջանեանը, չէր յիշում:

Նաւասարդ Վեզիրեան

Սարդարապատի ճակատամարտի ժամանակ կռուել են ռուսական արտադրութեան երկարափող «Մոսին» հրացաններով: Թանգարանի «ՀՊ» հաւաքածուում պահպանւում է **Նաւասարդ Վեզիրեանի** (1878–1937) «Մոսին» հրացանը (ՀԱՊԹ 8314/1, «ՀՊ» 4): Անդրանիկ զօրավարի եւ Գարեգին Նժդեհի սիրելի ու վստահելի զինակիցը ծնուել է Կապանի շրջանի Վաչագան գիւղում: Զբաղուել է դարբնութեամբ: 1915 թ. մասնակցել է Առաջին աշխարհամարտին, 1918 թ.՝ Սարդարապատի ճակատամարտին եւ Զանգեզուրի համար մղուող մարտերին: Նաւասարդի համագիւղացիները մինչ օրս էլ հպարտութեամբ են պատմում նրա անուան շուրջ հիւսուած լեգենդները: Նրա բազկի ուժն այնքան զօրեղ է եղել, որ սրի մի հարուածով կաթսայի հետ միասին կտրել է թուրք զինուորի գլուխը: Ընկերների վկայութեամբ՝ 1916 թ. Հասանկալայում ցուցաբերած քաջութեան համար Անդրանիկը ցանկացել է իր սուրը նուիրել նրան, բայց Վեզիրեանը հրաժարուել է ընդունել՝ պատճառաբանելով, որ կռիւը դեռ չի աւարտուել, եւ այն զօրավարին դեռ պէտք կը գայ[19]: 1930 թ. Վեզիրեանը ձերբակալուել է որպէս դաշնակցական: 1937 թ. գնդակահարուել է Երեւանի բանտում: Վեզիրեանի «Մոսին» հրացանը 2014 թ. նոյեմբերի 29-ին թանգարանին է նուիրել թոռը՝ Արարատը (Ալիկ), ազգական Շմաւոն Վեզիրեանի նախաձեռնութեամբ: Հաւաքածուում է նաեւ խիզախ հայորդու երկսայր, տափակ, երկու կողմից ակօսաւոր շեղբով դաշոյնը (ՀԱՊԹ 8398, «ՀՊ» 11/1)՝ «ՆԱՎԱ» մակագրութեամբ, որի ներքեւում սարդի դաջազարդ պատկեր է (յաւելուած I, նկ. 2): Թանգարանին է նուիրուել 2010 թ.:

Սարդարապատի ճակատամարտի ժամանակ իր խիզախութեամբ աչքի է ընկել վասպուրականցի հայդուկ **Երուանդ Կիւրեղեանը** (1888–1998): Նա ծնուել է Վանի նահանգի Հայոց Ձոր գաւառակի Քերծ գիւղում: 1905 թ. ընդգրկուել է Արմենական կուսակցութեան ինքնապաշտպանական միութեան կազմում, միացել գիւղի ինքնապաշտպանութեան խմբին: 1908 թ. անդամակցել է «Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը»:

19 Տե՛ս **Նուրիջանեան Հ.**, Արդարացում, Եր., 2004, էջ 30:

Երուանդ Կիւրեղեան

1914 թ. զօրակոչուել է թուրքական բանակ, բայց յաջողել է փախչել բանակից: 1921 թ. Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ տարագրուել է Պարսկաստան: 1979 թ. այցելել է Հայաստան, եղել Սարդարապատի յուշահամալիրում, լուսանկարուել յուշապատի մօտ, առիթը բաց չթողնելով՝ մանրամասներ պատմել Սարդարապատի ճակատամարտից: 1985 թ. բնակութիւն է հաստատել Լոս Անջելեսում: 1988 թ. գրել է «Իմ յուշերի ճանապարհով» խորագրով յուշապատումը: Մահացել է 1998 թ. փետրուարի 21-ին: 2011 թ. որդին՝ Վարուժան Կիւրեղեանը, հօր գրած յուշապատումը եւ համրիչ-տէրողորմեան (ՀԱՊԹ 8423/2, «ՀՊ» 17) նուիրել է թանգարանին (յաւելուած IV, նկ. 2): Ձկան երկտակ դեղնաւուն թելի վրայ շարուած 33 գլանաձեւ եւ 2 ոսպաձեւ դեղին սաթէ հատիկներից բաղկացած շարանը երկու կողմից ագուցուած է մէկ երկարաւուն ձեւաւոր հատիկի մէջ, որը հանգոյցով ամրանում է կախիկ-բռնակին: Այս համրիչ-տէրողորմեան լրացնում է համանուն հաւաքածուն:

Կարապետ Վարդանեան

Միւս համրիչ-տէրողորմեան (ՀԱՊԹ 7124, «ԹՄ» 797) պատկանում է գնդացրորդ **Կարապետ Վարդանեանին** (1896-1966): Նա ծնուել է Ապարանում, սովորել տեղի երկդասեան դպրոցում, այնուհետեւ՝ Գէորգեան ճեմարանում: 1914 թ. անցել է զինուորական ծառայութեան: Կռուել է Կովկասեան ճակատում՝ Սարիղամիշում եւ Էրզրումում: 1918 թ. մասնակցել է Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի ճակատամարտերին, յետագայում՝ Հայրենական մեծ պատերազմին: Նրա համրիչ-տէրողորմեան շարուած է արհեստական թելի վրայ (ձկան թել), բաղկացած է սեւ եւ մուգ շագանակագոյն պլաստմասէ նիւթից եւ արհեստական սաթից պատրաստուած 18 գլանաձեւ հատիկներից: Նրան է պատկանում նաեւ միակտոր փայտից պատրաստուած ծխամորճը (ՀԱՊԹ 7119, «ԱԿ-1» 815): Այն ունի երկարաւուն սնամէջ իրան եւ կլոր փոսիկ: Ծխամորճի իրանը յարդարուած է երկու կլորզուգահեռ օղակներով (յաւելուած IV, նկ. 1): Այն 1989 թ. թանգարանին է նուիրել նրա դուստրը՝ Յասմիկ Վարդանեանը:



Սարգիս Թարվերդեան

1988 թ.:

1918 թ. մայիսի 21-ին, երբ թուրքերը ներխուժել էին Սարդարապատի շրջան, Էջմիածնի շրջակայ գիւղերի բնակիչները, աշխարհազօրային ջոկատներ կազմելով, մեկնել են ռազմի դաշտ եւ մարտնչել թշնամու դէմ: Նրանց թւում էր Էջմիածնի Գրամփա (Ծիածան) գիւղի բնակիչ **Սարգիս Թարվերդեանը** (1870-1943): Այս հերոսից պահպանուել է իր հրացանի սուինը (ՀԱՊԹ 7123, «ԹՄ» 796), որը քառակող է՝ աստիճանաբար նեղացող ծայրով: Ամբողջ երկարութեամբ արուած են ակօսներ: Սկզբնամասն ունի կլորաւուն անցք, որով միանում է հրացանի ձողին: Սուինը թանգարանին է նուիրել ճակատամարտի մասնակցի թոռը՝ Սերոժ Սարգսեանը,

Հմայեակ Խաչատրեան

Հմայեակ Խաչատրեանը Էջմիածնի շրջանի Սամաղար (Գեղակերտ) գիւղից էր: Սովորել է Սամաղար գիւղի ռուսական դպրոցում: 1917 թ. մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: Կռուել է Էրզրումում, Սարիղամիշում եւ Կարսում: 1918 թ. մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին իր համագիւղացի Սարգիս Սարգսեանի կազմած 60-հոգանոց ջոկատի կազմում: 1918 թ. հունիսի 15-ին մասնակցել է Քէօրփալու (Արշալոյս) գիւղի ճակատամարտին, իսկ 1941-1942 թթ.՝ Հայրենական պատերազմին: Այս մարտիկի անձնական իրերից պահպանուել են գրպանի երկու ժամացոյցները (ՀԱՊԹ 7120/1, «ԹՄ» 793/1, ՀԱՊԹ 7120/2, «ԹՄ» 793/2): Կլոր ժամացոյցի դաշտի կենտրոնում՝ շրջանակի մէջ, ֆիրմայի էմբլեմն է եւ «Tavanes Watch Co» գրութիւնը: Ժամացոյցը երկփեղկ է. առաջինի վրայ՝ ներսի կողմից, գրուած է «Նուէր Հմայեակին»: Միւսը՝ կլոր եւ դեղնաւուն, թուատախտակով է: Դաշտը եզրագծուած է վանդակաւոր նուրբ շրջանակով, որից ներս դասաւորուած են արաբական նիշերը՝ 1-24-ը (յաւելուած II, նկ. 5): Ժամացոյցները 1988 թ. թանգարանին է նուիրել նրա ազգական Բաւական Խաչատրեանը:

Յակոբ Մարգարեան

Սարդարապատի ճակատամարտի ժամանակ իր խիզախութեամբ աչքի է ընկել թալիշեցի (Արուճ) գնդացրորդ **Յակոբ Մարգարեանը** (1895–1987), որի նախնիները համանուն գիւղ են տեղափոխուել Մակու քաղաքից: 1915 թ. անցել է զինուորական ծառայութեան: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, յետագայում՝ Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմից յետոյ ապրել ու աշխատել է հայրենի գիւղում: Նրա անձնական իրերից թանգարանի համապատասխան հաւաքածուում պահպանւում են մետաղեայ ծխախոտատուփը (ՀԱՊԹ 8250, «ԹՄ» 844), շագանակագոյն, կաշուէ, ծալովի դրամապանակը (ՀԱՊԹ 8250, «ԹՄ» 3895), ձեռքի մեխանիկական ժամացոյցը (ՀԱՊԹ 8250, «Ա–170»), ծխամորճը (ՀԱՊԹ 8250/1, «ԱԿ–1» 854/1), ակնոցը (ՀԱՊԹ 8250/2, «ԱԿ–1» 854/2): Դրանք 2004 թ. թանգարանին է ճակատամարտի նուիրել մասնակցի որդին՝ Թելման Մարգարեանը (յաւելուած III, նկ. 2): Ուղղանկիւնաձեւ ծխախոտատուփի վրայ դաջուած է բնութեան տեսարան: Վերեւի ձախ անկիւնում՝ շրջանակի մէջ պատկերուած եղնիկի եղջիւրներից կախուած են հրացան եւ գալարափող, իսկ դարձերեսին դաջուած է վահան:

Ռուբէն Սարգսեան

Վերին Թալին գիւղի բնակիչ **Ռուբէն Սարգսեանը** (1893–1957) Սարդարապատի ճակատամարտին մասնակցել է որպէս աշխարհազօրային: 1918 թ. «Կովկասի պաշտպանութեան համար» ստացել է մեդալ: 1949 թ. աքսորուել է Ալթայի երկրամաս: Արդարացուել է 1956 թ. ապրիլի 20–ին: Նրա անձնական իրերից հաւաքածուում է պահւում ուղղանկիւնաձեւ երկմաս ծխախոտատուփը (ՀԱՊԹ 7115/1, «ԱԿ–3» 777/1): Այն գեղազարդուած է փոքրիկ քառակուսի յօրինուածքներով, որոնց մէջ դրոշմման եղանակով պատկերուած են բուսանախշեր (յաւելուած IV, նկ. 3): Այն թանգարանին է նուիրել հերոսի որդին՝ Համբարձում Սարգսեանը:

Նոյն հաւաքածուում են նաեւ Բաշ–Ապարանի հերոսամարտի մասնակիցների անձնական իրերը:

Դրաստամատ Կանայեան

Բաշ-Ապարանի ուղղութիւնը պաշտպանող զօրաջոկատի հրամանատարն էր **Դրաստամատ Կանայեանը**[20], ով կարողացել է տարածաշրջանից դուրս շպրտել թշնամուն եւ տանել յաղթանակ: Դրոն մահացել է Հայաստանից դուրս՝ հայրենիքի կարօտը սրտում: Տարիներ անց իրականացել է նրա «Ախ, մէկ էլ Երկիրը տեսնէի...» երազանքը: Նա «տեսաւ» իր Երկիրը, բայց 44 տարի անց՝ 2000 թ.: Կառավարական յանձնաժողովի յատուկ որոշմամբ՝ Դրաստամատ Կանայեանի աճիւնը տեղափոխուել է Հայաստան եւ մայիսի 28-ին ամփոփուել Ապարանում՝ Բաշ-Ապարանի հերոսամարտին նուիրուած «Վերածնունդ» յուշարձանի արեւմտեան եզրաթմբի վրայ: Աճիւնի տեղափոխման թոյլտուութեան փաստաթղթերի կրկնօրինակները պահւում են թանգարանում:

2017 թ. յուլիսի 14-ին թանգարան էր այցելել Դրոյի հեռաւոր ազգական Կարապետ Սահակեանը, ով պատմեց, որ պահպանուել են Դրոյի արծաթեայ ցանցկէն, սեւադապատ ծխախոտատուփը՝ «Դրօ» մակագրութեամբ, ութ մասից կազմուած քարտէզը, նոթատետրը, հօր լուսանկարները եւ փաստաթուղթ-անցագիրը՝ «Սոյն վկայականը ներկայացնող 4-րդ Էրիւանի դրուժինայի կամաւորականներ՝ Օսէպ Դաւիթ» գրութեամբ: Դրոյին պատկանող ոչ մի անձնական իր թանգարանը չունի:

Մամիկոն Տէր-Սարգսեան

Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից էր **Մամիկոն Տէր-Սարգսեանը**[21], ով 6-րդ հրաձգային գնդի 4-րդ վաշտի հրամանատարն էր: Նա գրի է առել իր յուշերը, որոնցում մանրամասն նկարագրել է 1918 թ. մայիսին Բաշ-Ապարանում տեղի ունեցած իրադարձութիւնները: Որպէս կադրային սպայ լաւատեղեակ էր այդ իրադարձութիւններին եւ հարուստ տեղեկութիւններ է հաղորդել ճակատամարտի մասին: Արիութեան ու խիզախութեան համար պարգեւատրուել է մի շարք շքա-

20 **Դրաստամատ Մարտիրոսի Կանայեան (1883-1956)** – 2-րդ կամաւորական ջոկատի հրամանատար, Բաշ-Ապարանի զօրաջոկատի հրամանատար, Հայաստանի Հանրապետութեան ռազմական նախարար (1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր):

21 **Մամիկոն Իսահակի Տէր-Սարգսեան** – ծնուել է 1897 թ. Ելիզաւետպոլի նահանգի Զեւանշիրի գաւառի Արքաչ գիւղում (հետագայում՝ Ադրբեջանի Հանրապետութեան Շահումեանի շրջանի Էրքեջ գիւղ): 1906 թ. ընդունուել է Գանձակի ռուսական գիմնազիա, իսկ 1916 թ.՝ Գորիի հրետանային դպրոց: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Կովկասեան ռազմաճակատում: Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ աքսորուել է Ռեազան: Համաներման է ենթարկուել եւ վերադարձել Երեւան: Ծառայել է հայկական միլիցիայի պահեստազօրում: 1937 թ. դեկտեմբերի 5-ին, եռեակի որոշմամբ, աքսորուել է Գորկու երկաթուղագծի Սուխոբեզվոդնի կայարան 10 տարի ժամկէտով: 1955 թ. ապրիլի 22-ին, ՀԽՍՀ Գերագոյն դատարանի կոլեգիայի որոշմամբ, արդարացուել է գործում մեղադրական ապացոյցներ չլինելու հիմքով: 1947-1950 թթ. տարբեր կազմակերպութիւններում կարճ ժամանակով աշխատել է որպէս գլխաւոր հաշուապահ: Մահացել է 1976 թ. Երեւանում:

նշաններով ու մեդալներով, այդ թւում՝ Գէորգիեւեան խաչի սպայական շքանշանով: Թոռնուհին պատմում էր, որ պապն իր շքանշանները նետել է Հրազդան գետը, իսկ լուսանկարներն ու փաստաթղթերն այրելով ոչնչացրել է՝ խուսափելով հետապնդումից: 1937 թ. դեկտեմբերի 5-ին Մամիկոն Տէր-Սարգսեանն աքսորուել է եռեակի կողմից 10 տարի ժամկէտով: Նրա պահպանուած անձնական իրերը տեղ են գտել թանգարանի հաւաքածուում: Դրանց թւում են բաց դարչնագոյն գրասեղանը (ՀԱՊԹ 8315/1, «ՀՊ» 5/1), որի վրայ, թոռնուհու վկայութեամբ, պապը գրի է առել ճակատամարտի մասին իր յուշերը, գրասարքը (ՀԱՊԹ 8315/2 ա, բ, գ, դ, «ՀՊ» 5/2 ա, բ, գ, դ), թթենու փայտից սադափապատ թառը (ՀԱՊԹ 8315/5, «ՀՊ» 5/5), որի իրանի աջ եւ ձախ կողմերում ռուսերէն գրուած են Մամիկոն Տէր-Սարգսեանի անուն-ազգանուան սկզբնատառերը՝ «М», «Ст»: Շարքն աւարտւում է շագանակագոյն, միակտոր փայտից, սնամէջ, հարթ յատակով գաւաթի նմանուող երկու գրչամանով (ՀԱՊԹ 8315/3, 4, «ՀՊ» 5/3, 4) (յաւելուած III, նկ. 3): Այս առարկաները 2009 թ. թանգարանին է նուիրել Մամիկոնի թոռնուհին՝ Վիկտորյա Տէր-Սարգսեանը:

Գաբրիէլ Ահարոնեան

Գաբրիէլ Ահարոնեանը (1885-1954) ծնուել է Մրգաշատ գիւղում: 1906 թ. անցել է զինուորական ծառայութեան, մասնակցել Առաջին համաշխարհային պատերազմին: 1918 թ. մայիսի 24-29-ը մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին քուչակեցի Վահան Ադամեանի մարտկոցում՝ որպէս թնդանօթաձիգ: Հաւաքածուի մաս են կազմում նաեւ նրա անձնական իրերը՝ կոր սրի շեղբը (ՀԱՊԹ 8314/1, «ՀՊ» 4/1) եւ մուգ շագանակագոյն, գլանաձեւ, սնամէջ, մի կողմում լայն, միւսում փոքր-ինչ նեղ եւ թոյլ արտայայտուած 2 ակօսագծերով ծխամորճը (ՀԱՊԹ 8314/2, «ՀՊ» 4/2) (յաւելուած I, նկ. 3), որը պատրաստել է Գաբրիէլ Ահարոնեանը: Դրանք 2009 թ. թանգարանին է նուիրել նրա թոռնուհին՝ Բերսաբէ Ահարոնեանը:

Սամսոն Մնացականեան

Պահպանւում են նաեւ Բաշ-Ապարանի ճակատամարտի մասնակից **Սամսոն Մնացականեանի** (1886-1958) անձնական իրերը: Նա ծնուել է Դաւալու (Արարատ) գիւղում, մասնակցել Առաջին աշխարհամարտին: Թուրքերի դէմ պայքարելու համար Սամսոնը գիւղի երիտասարդներից խումբ է կազմել, որը 1918 թ. միացել է Անդրանիկ զօրավարի ջոկատին: 1918 թ. մայիսին նա մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին, եղել է հրետանու գումարտակի հրամանա-

տար: 1937 թ. հոկտեմբերի 19-ին ձերբակալուել է եւ դատապարտուել աքսորի 10 տարով: 1947 թ. նոյեմբերին վերադարձել է աքսորավայրից եւ բնակութիւն հաստատել Էլար (ներկայումս՝ ք. Աբովեան) գիւղում: Նրան պատկանող իրերից են գերմանական արտադրութեան կաշուէ շագանակագոյն պատեանով հեռադիտակը (ՀԱՊԹ 8422/1, «ՀՊ» 16/1 ը), որի պատեանի ստորին մասում կայ հայերէն ձեռագիր գրութիւն՝ «Նուէր հայրիկից Ռաֆիկին, 1937 թ., Կիրովաբաղ», մի փայտէ տուփ (ՀԱՊԹ 8422/2, «ՀՊ» 16/2), որի կափարիչին՝ ներսի կողմում, ձեռագիր հայերէնով բանաստեղծութիւն է փորագրուած (16 տող) եւ հեղինակի անունը՝ «Սամսոն Ամուր Արազի»: Տուփի ներսի կողմում անուն-ազգանունն է՝ «Ս. Մնացականեան»: Միւսը ուղղանկիւնաձեւ, դարչնագոյն, ոճաւորուած բուսանախշերով զարդատախտակ (ՀԱՊԹ 8422/3, «ՀՊ» 16/3) է: Այս առարկաները պապի ծննդեան օրը՝ 2013 թ. օգոստոսի 27-ին, թանգարանին է նուիրել թոռը՝ Արմէն Մնացականեանը (յաւելուած III, նկ. 1):

Ռուբէն Ֆրանգուլեան

Ռուբէն Ֆրանգուլեանը (1889-1979) ծնուել է Բաշ-Ապարանում: 1910 թ. անցել է զինուորական ծառայութեան: 1917 թ. վերջից մինչեւ 1918 թ. ապրիլը նահանջելով Երզնկայից, Էրզրումից, Կարսից ու Ալեքսանդրապոլից՝ հասել է Բաշ-Ապարան: Սկզբում եղել է Ջահանգիր աղայի գնդում, այնուհետեւ՝ բաշապարանցի Դաւիթ Մելիքսեթեանի՝ 150 հոգուց բաղկացած ջոկատում: Ռուբէն Ֆրանգուլեանի անձնական իրերը՝ ծալովի դանակը (ՀԱՊԹ 8316/1, «ՀՊ» 6/1), ակնոցը (ՀԱՊԹ 8316/2, «ՀՊ» 6/2) եւ համրիչը (ՀԱՊԹ 8316/3, «ՀՊ» 6/3) 2009 թ. թանգարանին է նուիրել որդին՝ Ամուր Ռուբէնի Ֆրանգուլեանը (յաւելուած III, նկ. 4):

Թանգարանի հաւաքածուում պահպանւում են նաեւ Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակիցներից **Յովհաննէս Բալոյեանի՝** «Մաուզեր» մակնիշի երկու ատրճանակները (ՀԱՊԹ 8424/1, 2, «ԹՄ» 855) եւ երեսունութ փամփշտակալներով գօտին (ՀԱՊԹ 8424/3, «ԹՄ» 855) (յաւելուած I, նկ. 1): Դրանք 2012 թ. թանգարանին է փոխանցել Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ Սարգսեան Սրբազանը: Յովհաննէս Բալոյեանը (1886-1954) Սեբաստիայից էր: Մասնակցել է Ղարաքիլիսայի, Սալմաստի եւ Ուրմիայի Սարդարուտ գիւղի կռիւներին: Նրա՝ «Մաուզեր» մակնիշի ատրճանակը մուգ դարչնագոյն է, գերմաներէն «Waffenfabrik Mauser Oberndorf A/N» գրութեամբ, իսկ գործարանային համարը «46263» է: Ատրճանակն ունի

կաշուէ պատեան, գրպանիկ եւ գօտեկալ: Միւս ատրճանակի վրայ նոյն գրութիւնն է, իսկ գործարանային համարը «35517» է:

Հաւաքածուն ստեղծուել է թանգարանի աշխատակազմի հետեւողական աշխատանքի շնորհիւ, որը շարունակական բնոյթ է կրում: 1918 թ. Մայիսեան հերոսամարտերի հրամանատարական կազմի եւ մասնակիցների իրերը պահւում են «Թանկարժէք մետաղ», «Հերոսամարտերի պատմութիւն», «Ազգագրութիւն եւ կենցաղ 1, 2, 3», «Գործուածք» եւ «Ապակի» ֆոնդերում: Նրանց զէնքերի, շքանշանների, մեդալների ու զինուորական հագուստների առկայութեան դէպքում ֆոնդային հաւաքածուներն աւելի ամբողջական կը լինեն:

Արեւիկ Բ. Մելիքեան – գիտական հետաքրքրութիւնների շրջանակում են Առաջին աշխարհամարտը եւ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը:

Էլ. հասցէ՝ arevikmeliqyan@gmail.com

Summary

THE MEMORY OF THE 1918 MAY HEROIC BATTLES

In the collections of the National Museum of Armenian Ethnography and Liberation Struggle

Arevik B. Melikyan

Key words – May Heroic Battles, Sardarapat Memorial Complex, historical past, memory, weapons, household items, Aram Manukyan.

The article presents the personal belongings of the participants of the 1918 May heroic battles, preserved in the collections of the National Museum of Armenian Ethnography and Liberation Struggle.

Most of them are weapons and household items donated to the museum by the heirs of participants.

The aim of the article is to cover and popularize the personal relics of high-ranking commanders and self-defence fighters.

The article touches upon the personal belongings of one of the founders of the Republic of Armenia – Aram Manukyan, which were donated to the museum on June 24,1998 by his daughter Seda Manukyan.

The article also presents the history of personal belongings and documents of the command staff of the 1918 May heroic battles, for instance, the personal items

confiscated during the trial of Movses Silikyan, as well as property, awards, nominal weapons and manuscripts of the general commander of the Armenian artillery of the May 1918 heroic battles – Colonel Christopher Araratyan.

The article also presents the description of personal belongings of the commander of the 1st battalion of the 5th regiment, Staff-Captain Vardan Jaghinyan, the commander of the battalion fighting at the bridge guard-station of Margara village – Yervand Mamajanyan, Navasard Veziryan – the favorite and reliable comrade-in-arms of (Zoravar) Andranik and Garegin Nzhdeh, Yervand Kyureghyan – a haiduc of Vaspurakan, signalman of the 5th infantry regiment Hmayak Khachatryan, machine-gunner Hakob Margaryan, militiaman Ruben Sargsyan, as well as participants of Bash-Aparan battle Mamikon Ter-Sargsyan, commander of the artillery battalion Samson Mnatsakanyan, artilleryman Gabriel Aharonyan, machine-gunner of the 6th regiment Karapet Vardanyan, militiaman Ruben Frangulyan, participant of the Battle of Karakilisa Hovhannes Baloyan and other participants.

Резюме

ПАМЯТЬ МАЙСКИХ СРАЖЕНИЙ 1918 Г.

В коллекциях Национального музея этнографии и национально-освободительного движения Армении

Аревик Б. Меликян

В статье представлено описание личных вещей участников героических Майских сражений 1918 г., которые хранятся в коллекции Музея этнографии и национально-освободительного движения Армении.

Большинство из этих вещей – оружие и предметы домашнего обихода, в основном подаренные музею наследниками участников этих событий.

Цель статьи – представить людям личные, уже ставшие реликвиями, вещи высокопоставленных командиров, ополченцев и солдат.

В статье рассказывается о личных вещах одного из основателей РА Арама Манукяна, которые были переданы музею его дочерью Седой Манукян 24 июня 1998 г.

Представлена история личных вещей и документов командного состава войск, участвующих в героических Майских сражениях 1918 г., таких, как предметы, конфискованные во время судебного процесса над Мовсесом Силикяном, а также данные об имуществе, наградах, именном оружии и рукописях общего

командира армянской артиллерии, принимавшего участие в сражениях 1918 г., полковника Христофора Араратяна.

В статье представлено описание личных вещей командира 1-го батальона 5-го полка, штабс-капитана Вардана Джагиняна, командира батальона, сражавшегося на мостовой охране села Маргара Ерванда Мамаджаняна, друга и надежного соратника генерала (зоравара) Андраника и Гарегина Нжде Навасарда Везиряна, васпураканского гайдука Ерванда Кюрехяна, связиста 5-го стрелкового полка Амаяка Хачатряна, пулемётчика Акопа Маргаряна, ополченца Рубена Саргисяна, а также участников битвы под Баш-Апараном Мамикона Тер-Саргсяна, командира артиллерийского дивизиона Самсона Мнацаканяна, артиллериста Габриела Агароняна, пулемётчика 6-го полка Карапета Варданяна, ополченца Рубена Франгуляна, участника Каракилисской битвы Оганеса Балояна и других.

1918 Թ. ՄԱՅԻՍԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Յաւելուած I

Նկ. 1. Յովհաննէս Բալոյեանի՝
«Մաուզեր» մակնիշի ատրճանակները եւ փամփշտակալներով գօտին



Նկ. 2. Նաւասարդ Վեզիրեանի դաշոյնը եւ «Մոսին» հրացանը



Նկ. 3. Գաբրիէլ Ահարոնեանի կոր սրի շեղբը

Նկ. 1. Արամ Մանուկեանի ժամացոյցը, բաժակակալը եւ թեզանիքակալները

Նկ. 2. Քրիստափոր Արարատեանի օրագիրը

Նկ. 3. Վարդան Ջաղինեանի պայուսակը եւ հեռադիտակը

Նկ. 4. Երուանդ Մամաջանեանի ժամացոյցները եւ գօտին

Նկ. 5. Հմայեակ Խաչատրեանի ժամացոյցները

Յաւելուած III



Նկ. 1. Սամսոն Մնացականեանի հեռադիտակը



Նկ. 2. Յակոբ Մարգարեանի դրամապանակը, ժամացոյցը, ծխամորճը եւ ծխախոտատուփը

Նկ. 3. Մամիկոն Տէր-Սարգսեանի թառը, գրասարքը եւ գրչամանները

Նկ. 4. Ռուբէն Ֆրանգուլեանի դանակը եւ համրիչ-տէրողորմեան

Յաւելուած IV

Նկ. 1. Կարապետ Վարդանեանի համրիչ-տէրողորմեան եւ ծխամորճը

Նկ. 2. Երուանդ Կիւրեղեանի համրիչ-տէրողորմեան

Նկ. 3. Ռուբէն Սարգսեանի ծխախոտատուփը